

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ*

Անգլիացի ճանապարհորդ Ջեյմս Մորիս-ը, 1820 թվականին Թավրիզից Երևան կատարած իր ուղևորության ընթացքում, անցել է Նախիջևան—Նորաշեն, Յուվա—Դարդալու—Արտաշատ—Աղբաշ—Երևան ուղեգծով և մանրամասն նկարագրել է Արտաշատ գյուղի մոտ եղած ավերակները՝ վերագրելով այն Արտաշատ քաղաքին:

Անգլիացի մի այլ ճանապարհորդ՝ Ռոբերտ Քեր Բորդերը, 1817 թվականին Երևանից Թավրիզ կատարած իր ուղևորության ընթացքում, նույնպես այցելել է Արտաշատ գյուղը և նկարագրել նրա մոտ եղած ավերակները:

Մի այլ գերմանացի ճանապարհորդ՝ Կոչուբովի, 1817 թվականին դարձյալ Երևանից Թավրիզ կատարած իր ուղևորության ընթացքում հիշատակում է Արտաշատ քաղաքի մասին, գրելով հետևյալը.

«Էջմիածնի վանքում պահված հայկական պատմության հիշատակարանները հավաստում են, թե Նախիջևանը հին նշանավոր Արտաշատն է (Artaxat) և Հայաստանի ամենահին քաղաքներից մեկը»¹²:

Ինչպես տեսնում ենք, անգլիացի ճանապարհորդներից Ջեյմս Մորիսը, այցելելով Արտաշատ գյուղի մոտ եղած ավերակները և այնտեղ չգտնելով այն 36 սև մարմարյա սյուները, որոնք դրանից առաջ նկատել էր Շարդենը և մյուս կողմից, որ Արաքս գետը հոսում է այդ ավերակներից ավելի քան տասն մղոն հեռու, Մորիսին անհավանական

է համարում, թե դա լինի Արտաշատ քաղաքը: Նա գտնում է, որ Արտաշատը պետք է եղած լինի Արևելյան Արփաշայի և Արաքսի միացման վայրում ու Արբասաբադ բերդի կեսում, ուր Արաքսը մեծ կիսաշրջան կատարելով, ձևացնում է թերակղզի և որտեղ նկատվում է մեծ հողե բլուր, որը հավանաբար կաղմված լինի ավերակ շենքերից, իսկ Արաքսի վրա նկատվում են հին կամուրջի մնացորդներ: Այդ բլուրը, ինչպես ենթադրում է Մորիսը, համապատասխանում է Ստրաբոնի և Մովսես Խորենացու՝ Արտաշատի տեղագրության նկարագրությանը:

Միանգամայն պարզ է, որ Մորիսն անգամ չգիտե, որ Արբասաբադի բերդը գտնվում է Արաքս և Նախիջևան գետերի միացման վայրի մոտ, Արփաշայից հարյուր կիլոմետր ավելի հեռու՝ գետի արևելք և, որ Արաքսը Արարատյան դաշտավայրում ընդունում է բազմաթիվ գետեր և բնահանրապես հոսում է ողորդապետալու ընթացքով՝ ձիշտ են Մորիսի այն գիտողությունները, որ Արբասաբադ բերդի սահմաններում կան փոքր բարձունքներ և ընդարձակ ավերակներ, որոնք սակայն պատկանում են ոչ թե Արտաշատ, այլ հին Աստապատ քաղաքին, իսկ Արաքսի վրա իրոք պահպանվել են մեծ կամուրջի մնացորդները: Բացի այդ, Մորիսը, մեր կարծիքով, միանգամայն իրավացի է, երբ պնդում է, թե այդ մասում, այսինքն՝ Արտաշատի (նախկին Ղամարլուի) և Վեդուշի մասերում Արաքսը բոլորովին չի փոխել իր հունը:

Ինչ վերաբերում է գերմանացի ճանապարհորդներ Ֆրեյզանին և Ֆոն Կոցուրուին, որոնք Նախիջևանը նույնացնում են Արտաշատի հետ, վկայակոչելով պարսկական աղբյուրները, ապա բոլորին հայտնի է, որ ոչ պարսկական պատմական աղբյուրներ

*) Սկզբը ահ'ս «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի № III-ում:

12. «Ուղևորություն Մորիս Ֆոն Կոցուրուի, 1817 թ., Երևանից Թավրիզ», Երևան, 1931 թ., էջ 55:

րում և ոչ էլ էշմիածնում պահվող հաշկա-
կան պատմական որևէ հիշատակարանում
տեղեկություն չկա այն մասին, թե Նախիջե-
վանը հին Արտաշատ քաղաքն է:

Անվիճելի փաստ է, որ դրանք տարբեր
քաղաքներ են՝ Նախիջևանը՝ Ալունյաց նա-
հանգում, իսկ Արտաշատը՝ Այրարատյան
Միաժամանակ այն հանգամանքը, որ Ֆրեյ-
զանը Նախիջևան քաղաքի և Արաքս գետի
միջև եղած տարածությունը հաշվում է երե-
սուն վերստ, մինչդեռ նա հինգ վերստից ա-
վել չէ, հաստատում է այն փաստը, որ եվ-
րոպացի ճանապարհորդների մի մասը ծա-
նոթ չէ Հայաստանի պատմությանն ու նրա
ֆիզիկական աշխարհագրությանը:

Այդ բոլորից պարզ է դառնում նաև, որ
օտարազգի նշված ճանապարհորդների ուղե-
վորությունները չեն բխել Հայաստանի կամ
հարևան երկրների ժողովուրդների կուլտու-
րական արժեքներն ուսումնասիրելու բարի
ցանկություններից. բնդհակառակը, նրանց
այդ ուղևորությունները հետապնդել են ավե-
լի խորը՝ պետական քաղաքական նպատակ-
ներ, իսկ նրանց ճանապարհորդական-նկա-
րագրական հրատարակությունները հանդի-
սացել են մի միջոց իրենց ճանապարհորդա-
կան խնկական դիտավորությունները քղաք-
կելու համար: Դա ավելի հասկանալի է դառ-
նում, երբ նկատի ենք ունենում նրանց անձ-
նական և պաշտոնական դերը հայրենի և
օտար երկրներում:

Ուստի միանգամայն պարզ է ու անվիճե-
լի, որ օտարազգի ճանապարհորդների հա-
ղորդած տեղեկությունները բոլորովին հեռու
են իրական ճշմարտությունից և չեն կարող
նյութ ծառայել Արտաշատ քաղաքի տեղը
ճշտելու գործում:

Անդրադառնալով հայ հեղինակներին,
պետք է ընդգծել, որ դրանց շարքում համե-
մատաբար աչքի ընկնող տեղ է զբաղում
նաև Հ. Ս. Էփրեկյանը:

Արտաշատ քաղաքի տեղագրության խրն-
դիրը համեմատաբար ավելի հանգամանո-
րեն են քննել Քաջերունին, որը պաշտոնա-
վարելով Շարուր-Դալարազգալի նախկին
գավառում՝ գավառական բժշկի պաշտոնով,
անձամբ շրջագայել է Շարուր-Դալարա-
զգալի, Վեդի-Բասարի, Գառնի-Բասարի և
Զանգի-Բասարի նախկին շրջանները, տե-
ղում հետազոտել է պատմական հուշարձան-
ները և արդյունքները հրատարակել պար-
բերական մամուլում՝ «Ճանապարհորդական
նկարագրություն» հոդվածաշարքով:

Արտաշատ և Դվին անունով գյուղերի գո-
յությունը տվյալ վայրում շփոթության մեջ է
զցել նաև Քաջերունուն, որն Արտաշատ և

Դվին հին քաղաքները տեղագրում է համա-
նուն գյուղերի վայրում:

Քաջերունին իրեն անգոր համարելով Ար-
տաշատ և Դվին քաղաքների իսկական տե-
ղը որոշելու խնդրում, հարցը թողնում է
հետգետների հետազոտությանը:

Արտաշատի տեղագրության հարցը քննե-
լով, Բարդուղիմեոս եպիսկոպոսը հայտնում
է այն կարծիքը, թե գոյություն է ունեցել եր-
կու Արտաշատ, որոնք՝ գտնվում են ոչ թե
Նոր Վիրապի շուրջը կամ այժմյան Արտա-
շատ գյուղի սահմաններում, այլ ավելի դե-
պի արևմուտք՝ Վաղարշապատի և Նովան-
դակերտի տեղում, որպիսի տեսակետը մա-
սամբ պաշտպանում է նաև Կարապետ եղ-
յանը:

Այդ նույն տեսակետը պաշտպանում է
նաև Նաչիկ վարդապետը, որն Արտաշատ-
Վաղարշապատ քաղաքի սահմանները տա-
րածում է մինչև էշմիածնի ներկա շրջանի
Արգավանդ (Ջաֆարաբադ) գյուղը և Զվարթ-
նոց տաճարի ավերակների տեղը: Բացի այդ,
Նաչիկ վարդապետը տարբեր գետեր է հա-
մարում Մորին մեծ և Մեծամոր գետերը, ո-
րոնք հին մատենագիրների մոտ նշվում են
որպես միևնույն գետը:

Հայտնի է, որ հիշյալ հեղինակների տե-
սակետները չեն բխում պատմական փաս-
տերից և հեռու են Արտաշատ քաղաքի տեղը
որոշելու իրական խնդրից: Առավել ևս ան-
համատեղելի են նրանց տեսակետները մի
շարք գետերի նույնացման վերաբերյալ՝ հայ
պատմագիրների վկայությունների հետ:

Իհարկե, հնարավոր չէ քննության առնել
Արտաշատ քաղաքի տեղագրության խնդրով
զբաղվող բոլոր հեղինակների աշխատու-
թյունները, բանի որ բազմաթիվ և բազմա-
զան են այդ կարծիքներն ու ենթադրու-
թյունները:

Արտաշատ քաղաքի հիմնադրության մա-
սին ամենահին տեղեկությունները հաղոր-
դում են հայն և հռոմայեցի պատմիչները՝
Ստրաբոնը, Տակիտոսը, Պլինիոսը, Դիոն
Կասիոսը, որոնց համաձայն Արտաշատը
գտնվում է Արարատյան դաշտավայրում,
Արաքս գետի ափին:

Արտաշատ քաղաքի տեղագրության վերա-
բերյալ որոշակի տեղեկություններ կան նաև
հայ մատենագրական աղբյուրներում: Պատ-
մահայր Մովսես Նորենացու վկայությամբ,
Արտաշատը կառուցված է բլուրների վրա,
Արաքս և Մեծամոր գետերի միմյանց խառ-
նելիլու վայրում:

«Արտաշատ» գնում է այն տեղը, որտեղ
Նրասիսը և Մեծամորը խառնվում են, և
այնտեղ բլուրին հավանելով, քաղաք է

շինում և իր անունով կոչում է Արտաշատ¹³:

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը իր մենագրական աշխատություններից մեկում, Ստրարոնի և Մովսես Խորենացու հիշատակված վիճակությունների հիման վրա, քննության առնելով Արտաշատ քաղաքի տեղագրության հարցը, ենթադրում է, որ այդ տվյալները համընկնում են և կարող են վճռական նշանակություն ունենալ Արտաշատ քաղաքի տեղը որոշելու գործում:

Անկասկած է, որ Ստրարոնի և Մովսես Խորենացու վերևում հիշված տեղեկությունները կարող են իրոք վճռական նշանակություն ունենալ Արտաշատ քաղաքի տեղը որոշելու խնդրում: Սակայն մի հանգամանք պետք է նկատի ունենալ. դա այն է, որ Մեծամոր գետի Արաքսին միանալու ալժմյան վայրում չկան ոչ բլուրներ և ոչ էլ որևէ հին բնակավայրի հետքեր: Ուստի որշափով էլ որոշակի են Ստրարոնի և Խորենացու վկայությունները, այնուամենայնիվ նրանք ղգալի չափով թերի են ներկա իրադրության պայմաններում և չեն կարող վերջնական ձևով որոշել Արտաշատի տեղը: Տվյալ դեպքում անհրաժեշտ են լրացուցիչ պատմական տվյալներ, որոնք օժանդակ նյութ ծառայեն նշված խնդիրների լուծման համար:

Այդ տեսակետից առավել հետաքրքիր են Մովսես Խորենացու և Փավստոս Բյուզանդացու Դվին քաղաքի կառուցման և պետական արքունիքը Արտաշատից այնտեղ տեղափոխելու վերաբերյալ տեղեկությունները, որոնցից որոշակի կերպով իմանում ենք, որ Դվին քաղաքը նույնպես գտնվում էր Արաքսից դաշտավայրում, Ազատ և Մեծամոր գետերին մոտիկ, Արտաշատ քաղաքի հանդեպ, վերջինիս հյուսիսային կողմում և, որ Արտաշատից դեպի հյուսիս գտնվող մեծ ճանապարհն անցել է Դվին քաղաքի վրայով՝ Խոսրովակերտ և Տիկնիսի ապարանքների արանքով, որոնք ամենայն հավանականությամբ եղել են Դվին քաղաքի արվարձանները:

Ալժմյան Արտաշատ (Վերին Արտաշատ) գյուղի մեջ գտնվող ավերակների վայրում կատարված բազմաթիվ հնագիտական պեղումները, ինչպես և ակադեմիկոս Ն. Մառի 1892 թվ. և իտալական 1907 թվ. և ՍՍՌԲ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի կողմից 1937 թվ. սկսած ու այնուհետև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կողմից մինչև այժմ շա-

րունակվող պատեմատիկ հնագիտական պեղումներն այլևս ոչ մի կասկած չեն թողնում, որ այդ ավերակները պատկանում են Խոսրով թագավորի կառուցած Դվին քաղաքին: Վերջինս տարածված է եղել ներկայիս Վերին Արտաշատ, Թափարաշ, Թոփրախալ, Այգեհատ և Ախուրդզովան գյուղերի սահմաններում, բռնելով ավելի քան 12 քառակուսի կիլոմետր տարածություն:

Միաժամանակ, մեր կողմից Դվին քաղաքի ավերակների շրջակայքում կատարած մի շարք հնագիտական հետախուզումները բերել են այն համոզման, որ Փավստոս Բյուզանդացու մոտ հիշատակված Տիկնիսի ապարանքը պետք է լինի քաղաքատեղից մոտ երեք կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Կրզ-կալասի անունը կրող ամրոցը: Վերջինս մի բլուր է, հարթ զազաթով՝ քառափնեով եղբոված, որոնք միաժամանակ ամրացված են եղել հաստ պարիսպներով: Դադաթի հարթության վրա, պարիսպների ներսում նկատվել են բազմաթիվ շենքերի հետքեր, իսկ գետնի երեսին թափված են թրծած աղյուսներ և պատի կրաշաղախ միջուկի բեկորներ: Պարսպապատերից պահպանվել են շատ աննշան հետքեր՝ արևմտյան կողմից շատ հետաքրքրական ամրոցների բնորոշ գլխավոր մուտքով: Առանձնապես հետաքրքիր է այն, որ տեղացի բնակչությունը մինչև այժմ էլ «Կրզ-կալասի» ասելով հատկապես շեշտում է այն հանգամանքը, որ այդ տեղը եղել է հայոց թագավորների արքունի կանանոցը:

Մատենագրական մի շարք տվյալներից նույնպես ակնհայտ է դառնում, որ պետական արքունիքը միշտ ձգտել է պալատական կանանց հետո պահել արքունիքից, պետական քաղաքականության հարցերին նրանց միջամտության հավանական փորձից խուսափելու նկատառումներով:

Ինչ վերաբերում է Խոսրովակերտ արքունի ապարանքներին, մեր կարծիքով, դա պետք է լինի Վերին Արտաշատ գյուղից մոտավորապես երեք կիլոմետր դեպի հարավ, որտեղ վերջին ժամանակներս հիմնադրվեց Բատրակաշեն անունով փոքրիկ ավանը: Այդ ավանի շինարարական աշխատանքների ժամանակ գետնի տակից հայտնաբերվում էին շենքերի պատերի մնացորդներ, շարված մաքուր տաշված քարերով, կրաշաղախով մածուցված, ինչպես և խեցեղեն ամանների բազմաթիվ կտորներ: Հայտնաբերված այդ մնացորդների ուշադիր զննումը ենթադրել է տալիս, որ նրանք պատկանում են Հայաստանի պատմության հնագույն շրջանին:

Փավստոս Բյուզանդացու վկայությամբ Խոսրովակերտը կառուցված էր Մեծամոր

13. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևան, 1940 թ., էջ 117:

գետի հովտում, եղեղնարերանին, այսինքն այն վայրում, որ վերջանում են Արարատյան դաշտավայրի ամենացածրագրի մասերը, որոնք սովորաբար ծածկված են լինում եղեղնառաններով ու ճահճառաններով և սկսվում է բարձրագույն մասը, որն ստորհասարար վեր է անվում սարահարթի և միաձուլվում հյուսիսային կողմի լեռնաշղթային:

Որ Արտաշատը գտնվում էր Արարսի ձախ ափին, այդ մասին որոշակի տեղեկություններ կան նաև հայ պատմիչների՝ Փավստոս Բյուզանդացու և Ղազար Փարպեցու մոտ:

Փավստոս Բյուզանդացու նկարագրությունը երևում է, որ Արտաշատը գտնվում էր Արարսի ձախ ափին, որովհետև, ինչպես տեղեկացնում են պատմական աղբյուրները, Արտաշատի մոտ եղել է երկու կամուրջ՝ Տափերական կոչվող կամուրջը, որը գտնվել է Արարս գետի վրա, զեպի հարավ տանող ճանապարհին և Մեծամորի անվանվող կամուրջը, որը գտնվում էր Մեծամոր գետի վրա՝ զեպի Դվին կամ ընդհանրապես զեպի հյուսիս տանող ճանապարհին:

Այս փավստոս Բյուզանդացին խոսելով պարսից Շապուհ Բ թագավորի 382 թվականին Արտաշատ քաղաքի վրա կատարած հարձակման մասին, տեղեկացնում է.

«Եւ Էղև յորժամ ամին Ժողովեցին զամենայն զգրին քաղաքին ի մի վայր, և անցուցին ըստ Տափերն կամուրջ, և առնէին համար գերուոյն, ի մէջ շերտափակ զօրացն պատեհն, ասեն զօրագլուխն ցԶուխի երէց քաղաքին Արտաշատու»¹³:

Ինչպես հայտնի է, Շապուհի 382 թվականին Արտաշատի վրա կատարած հարձակման ժամանակ պարսիկները մեծ ավերածություններ կատարեցին քաղաքում և շատ մեծ թվով զերիներ տարան Պարսկաստան: Բյուզանդացու վերը մեջ բերված պատմածից երևում է, որ պարսիկները զերիներին հավաքում են մի վայրում և ապա անցնելով Արարսը Տափերական կամուրջով վարում են Պարսկաստան: Այդ ժամանակ Արտաշատից պարսից իրկիրը տանող ամենամոտ և հարմար ճանապարհը հարավային ուղղությամբ էր: Հասկանալի է, որ եթե Արտաշատ քաղաքը գտնվելիս լիներ Արարսի աջ ափին, ապա կարիք չէր լինի հայ զերիներին անցկացնել Արարսը Տափերական կամուրջով, զեպի ձախ ափը, այսինքն զեպի հյուսիս:

Ղազար Փարպեցին ավելի որոշակի կերպով Արտաշատ քաղաքը դնում է Արարսի

¹³ Փավստոս Բյուզանդացի, «Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1913 թ.:

ձախ ափին: Փարպեցու այդ հաղորդման համաձայն, Արտաշատը եղել է մի գյուղաքաղաք, զուրկ իր նախնի փառքից ու հզորությունից¹⁴:

Այսպիսով, «տարազգի և հայ պատմիչների վերը մասնանշված տեղեկությունները անհերքելի կերպով ապացուցում են, որ Արտաշատ քաղաքը գտնվում էր Արարատյան դաշտավայրում, Դվին քաղաքի հարավային կողմում, Արարս գետի ձախ ափին, բյուզանդիկ վրա:



Մեզ մնում է նաև քննության առնել Արարատյան դաշտավայրով հոսող Արարսի ձախակողմյան վտակները կազմող գետերի, առավել ևս Մեծամորի գետի՝ բնիայքը, ավելի հիմնավորելու համար մեր կարծիքը Արտաշատ քաղաքի տեղագրության մասին:

Ակադեմիկոս Մանեղյանը քննության առնելով պատմական աղբյուրները՝ Դվին քաղաքի տեղը որոշում է այժմյան Արտաշատ գյուղի մոտ գտնվող ավերակների վայրում, միաժամանակ Արտաշատ քաղաքը զննելով նրա հարավային կողմում: Այս մասին նա գրում է.

«Գիտական աշխատություններում, ինչպես հայտնի է, գերիշխում է այն կարծիքը, որ հին Արտաշատը գտնվում էր այժմյան Արտաշատ գյուղի վայրում: Լինելով տեղում զգվար չէ համոզվել, որ Արտաշատ գյուղի մոտ գտնվում են ոչ թե հին Արտաշատի, այլ հետագայի մայրաքաղաք Դվինի ավերակները:

Հետևապես, հետևելով հայ պատմիչների ցուցումներին, Արտաշատ մայրաքաղաքը պետք է փնտրել այդ վայրից նկատելի շարժով զեպի հարավ: Այստեղ, հարավում պետք է ըստ երևույթին հետազոտել Արարսի հարթավայրում ընկած տեղիտորթան և, նախ և առաջ պետք է կատարել երկրաբանական հետախուզություններ, պարզելու համար Արարսի, ինչպես և Մեծամորի հին հունը»¹⁵:

Բնորոշ է այն, որ Մանեղյանը նույնպես, ինչպես Արիշանը և ուրիշները, մասնացույց են անում այն հանգամանքը, որ բացի մատենագրական տեղեկություններից անհրաժեշտ է նաև երկրաբանական հետա-

¹⁴ Ղազար Փարպեցի, «Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1904 թ., էջ 143—144:

¹⁵ Պրոֆ. Զ. Մանեղյան, «Հայաստանի առևտրի և բաղադրների մասին», ՀայկաՍՍՀ, Երևան, 1930 թ., էջ 14 (ուսանքնեք բնագրից թարգմանությունը մերն է—Զ. Ե.):

գիտական հետազոտություններ կատարել պարզելու համար Արարատյան դաշտավայրով հոսող գետերի հին ընթացքը և այնտեղ գտնվող հին բնակավայրերի տեղը:

Նախքան հնագիտական-տեղագրական հետազոտությունների արդյունքների մասին խոսելը անհրաժեշտ է քննության առնել պատմական աղբյուրների տեղեկությունները Արարատյան դաշտավայրով հոսող գետերի հին ընթացքի մասին:

Աղաթանգեղոսը նկարագրելով Անակի կողմից հայոց հոսքով թագավորին սպանելու հանգամանքները տեղեկացնում է, որ Անակը խաբեությամբ հոսքովին սպանելուց հետո, անմիջապես յուրայինների հետ միասին ձկեր նստած փախչում են գետի Պարսկաստան: Հայ նախարարները ստանալով թագավորի սպանության և Անակի փախուստի լուրը, հետապնդում են նրանց և Արտաշատ քաղաքում հասնելով փախչողներին, բռնում են բոլորին և Տափերական կամուրջի մոտ զցելով Արաքս գետը՝ խեղդում:

«Իսկ իբրեւ զայն գիտացին նախարարք հայկոյտ զօրացն՝ գունդ գունդ հատանէին, զկնի լինէին. ոմանք ընդ ցամաքն աճապարեալ, հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի: Զի գետն երասիս յարուցեալ զայր ըի դարիւ և զարիւ, սառնահալ, ջրակուտակ, ձիւնասող, ձիւնախաղաղ բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն: Կէսքն անցեալ ընդ կամուրջն վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամորի կոչեն՝ աճապարէին հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու: Ի կիրճն աճապարհացն արգելին զնոսա, ի մէջ արարեալ զնոսա՝ ի Տափերական կամրջացն զետալէժ առնէին զնոսա»¹⁷:

Աղաթանգեղոսի այդ նկարագրությունից պարզ երևում է, որ նա երկու կամուրջ է հիշատակում Արտաշատ քաղաքի մոտ, մեկը մեկ հայտնի Տափերական կամուրջը, որը գտնվում էր Արաքս գետի վրա և մյուսը՝ վաղարշապատի կամ Մեծամորի անունով, որն, անկասկած, պետք է ընենր Մեծամոր գետի վրա: Մի շարք ուսումնասիրողներ սխալ են մեկնաբանել Աղաթանգեղոսի այդ տեղեկությունը, շփոթելով կամ նույնացնելով Մեծամորի նշված կամուրջը՝ վաղարշապատ քաղաքին մոտիկ գտնվող Մեծամոր գետի վրա եղած մի այլ կամուրջի հետ: Ինչպես

հայտնի է, մի շարք հայ մատենագիրների մոտ այդ կամուրջը նույնպես կոչվում է «վաղարշապատի կամուրջ»: Խոսելով Հռիփսիմյան կույսերի նահատակության մասին, Աղաթանգեղոսը որոշակի կերպով մատնացույց է անում այդ կամուրջը. նա գրում է.

«Արդ՝ ելեալ զաճապետն պարծելով՝ շարամահ առնել զնա, և ետ հանել զնոսա շղթայիւք ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային որ հանէր ի Մեծամորի կամուրջն, ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս, ի ճախճախուտ տեղի մի, մօտ ի պարկէն փոսին որ շուրջ զայր զքաղաքան»¹⁸:

Ինչպես տեսնում ենք, Աղաթանգեղոսը Մեծամորի այդ կամուրջը որոշակի կերպով գնում է վաղարշապատից հարավ, այն ճանապարհի ուղղությամբ, որը վաղարշապատից տանում էր գետի Բագրեանդ, Տարոն և այլն: Հիշյալ կամուրջի խելերի մնացորդները մինչև այժմ էլ նկատվում են էջմիածնի շրջանի Վերին Խաթունարիս գյուղի հարավային կողմում, Մե-ջուր (Մեծամոր) գետի ափերին: Վաղարշապատից Արտաշատ տանող ճանապարհը գնում էր արևելյան ուղղությամբ, քաղաքի Արեգ դռնից, ինչպես այդ մասին պարզ կերպով նշում է Աղաթանգեղոսը և Մեծամորի գետն անցնում էր Արտաշատի մոտ՝ վաղարշապատի կամ Մեծամորի կամուրջով:

«... եւ ընթացեալ (Հռիփսիմի կույսը — Հ. Ե.) ընդ քաղաքամէջսն՝ ելանէր ընդ արեւելս կոյս, ընդ Արեգ դուռն քաղաքին: ... և ինքն յարեւելս կոյս, ի սարավանդակ ի բարձրավանդակ յառաջին տեղի մի, մօտ քի բուն պողոտային, որ երթայր յԱրտաշատ քաղաք»¹⁹:

Աղաթանգեղոսի նախորդ վկայությունը որոշ բանասերների մեջ շփոթություն է առաջ բերել մի այլ առիթով: Ոմանք իրավացի կերպով նկատում են, որ Արարատյան դաշտավայրում լեռներ, ապա և լեռնային կիրճեր չկան, որի մասին պատմում է Աղաթանգեղոսը, խոսելով հայ նախարարների՝ Անակին հետապնդելու մասին: Այդ կարգի բանասերները մոռանում են, որ Աղաթանգեղոսի մոտ խոսքը վերաբերում է ոչ թե վաղարշապատից մինչև Արտաշատ տեղամասին, որտեղ իրոք գոյություն չունեն ոչ լեռներ և ոչ էլ

17. Աղաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909 թ., էջ 22—23:

18. Նույն տեղում, էջ 111:

19. Նույն տեղում, էջ 103—104:

լիծառային կիրճեր, այլ Արտաշատ քաղաքի սահմաններում եղած բլուրներին ու գրանց մեջ եղած կիրճերին: Ազաթանդեղոսը որոշակի կերպով հիշատակում է, որ Հայ նախարարներից ոմանք իրենց գործարկերով անցան Մեծամորի կամուրջը և լիծառային կիրճերում փակելով Անախի ու նրա խմբի կանապարհը՝ բռնեցին նրանց և Տափերական կամրջի խելի մոտ գահավեժ գլուխներին Արաքսի վարարած ջրերի մեջ:

Ազաթանդեղոսի այդ վկայությունները մի ավելորդ անգամ հաստատում են, որ Արտաշատը գտնվում էր մեր մասնացույց արած վայրում, այսինքն՝ Արարատյան դաշտավայրում, Արաքս գետի ձախ ափին, բլուրների վրա, ներկայիս Վեդու շրջանի Շխար գյուղի արևմտյան կողմում, Մեծամոր՝ և Արաքս գետերի միացման վայրում, փնջպես այդ մասին պարզ կերպով տեղեկացնում է պատմահայր Մովսես Խորենացին: Ուստի վերը նկարագրած բլրախմբի հյուսիսային կողմում նկատվող ցամաքած գետի հունը անկասկած պատկանում է Մեծամոր գետին:

Արտաշատ քաղաքի սահմաններում մեր կողմից բազմիցս կատարած հնագիտական հետազոտությունները հիմք են տալիս որոշելու Մեծամոր ու Տափերական կամուրջների տեղը: Դրանցից առաջինը պետք է գտնվելիս լինեի Արտաշատի հյուսիսային կամ մի փոքր դեպի հյուսիս-արևմուտք թեքված կողմում, այն վայրում, ուր պահպանվել են քաղաքի պարիսպների այդ կողմի զլխավոր մուտքի հետքերը, որտեղից ճանապարհը դառնում է դեպի Վաղարշապատ և Դվին քաղաքները: Երկրորդ՝ Տափերական կամուրջը պետք է գտնվելիս լինեի քաղաքի հարավ-անելյան կողմում, այն վայրում, որտեղ պահպանվել են քաղաքը շրջափակող ամրոցների այդ մասի զլխավոր մուտքի հետքերը, որտեղից ճանապարհը տանում էր դեպի հարավային ուղղությամբ:

Բանասիրական և տեղագրական դրականությունն որոշ հեղինակներ, որոնց մասին առիթ ունեցանք խոսելու վերևում, Մեծամորը նույնացնում են Քասաղ, Հրազդան, Վեդի, Արեւելյան Արփաշայ, ֆակ ոմանք էլ նույնիսկ (օտարազգի հեղինակներից) Քուռ, Նախիջևան և այլ գետերի հետ: Առանձին Հայ հեղինակներ, ելնելով այն բանից, որ Արարատյան դաշտավայրով հոսող, Արաքսի աջակողմյան վտակները կազմող որոշ գետեր հայտնի են Մեծամոր կամ Սև-ջուր անունով, որոնց ափերը նույնպես պատած են ճահիճներով ու եղեգնուտներով, փնջպես նրա ձախակողմյան վտակը կազմող մեր նկարագրած Մեծամորի կամ Սև-ջրի ափերը՝

ենթադրում են, որ Խորենացու մոտ հիշատակված Մեծամորը վերաբերում է Արաքսի աջակողմյան վտակը հանդիսացող համանուն գետին, հետևապես Արտաշատ քաղաքը գնելով Արաքսի աջ ափին, որը հակասում է պատմական փաստերին: Միաժամանակ այդ հեղինակները բացառում են այն փաստը, որ ինչպես Մովսես Խորենացուն, այնպես էլ մյուս Հայ պատմիչներին որոշակի հայտնի են ոչ միայն Արարատյան դաշտավայրով հոսող, այլև Հայաստանի բոլոր գետերը:

Մովսես Խորենացին նկարագրելով Հայոց Վաղարշակ թագավորի նախապատրաստական ձեռնարկումները Մակեդոնիայից կողմնակից երկրների վրա արշավելու համար տեղեկացնում է.

«Վաղարշակն էլ մեծ զորք է գումարում... Հասնում է մեր աշխարհի միջավայրը, Մեծամորի ակունքից վեր, Նրասխի ափը, Արմավիրի մոտ, որ Բլուր է կոչվում, բավական շատ օր մնում է այնտեղ, որովհետև, ինչպես հարկ է առել՝ (զինվորական) կարգեր չդիտեին»²⁰:

Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին Մեծամորի ակունքները գնում է Արմավիրից ներքև, վերջինիս մոտիկ: Մեծամորի ակունքները, որոնք գտնվում են Այդեր լճի սահմաններում, իրոք որ շատ մոտ են Արմավիրին և ընկած են նրանից ներքև: Մինչդեռ Արաքսի աջակողմյան վտակը հանդիսացող Մեծամորի ակունքները գտնվում են Արարատ լեռան հյուսիսային ստորոտներում, որոնք շատ հեռու են, թե՛ Արմավիրից և թե՛ Արաքս գետից:

Մեծամորի ակունքները Այդեր լճի սահմաններում է գնում նաև պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին: Խոսելով Արարների Խուլիմա ոստիկանի՝ Հայաստանի վրա կատարած արշավանքների մասին Դրասխանակերտցին պատմում է, որ Խուլիման գրավելով Դվին մայրաքաղաքը, կամենում էր սեփականել նրա դատակերտը հանդիսացող Արտաշատը, Կավակերտը և Հոռոմոց մարզը, որոնք այդ ժամանակ պատկանում էին կաթողիկոսական տանը: Հովսեփ կաթողիկոսը ամեն կերպ դիմադրում է Խուլիմայի այդ մտադրությունների իրագործմանը: Խուլիման ցանկանալով վրեժ լուծել կաթողիկոսից, իր ծառաների միջոցով, Մեծամորի ակունքների մոտ սպանել է տալիս նրա եղբորը և գցում հյուսիսային կողմում գտնվող ծովակը:

²⁰. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», էջ 63:

«... Ի հրամանէ նորա, ծառայք նորա ըմբռնեալ զեղբայր մեծին Յովսէփայ, յախունս Մեծամորի սպանեալ՝ ընկեցին զնա ի ծովակն, որ է ի հիւսիսոյ կողմանէ ախանցն»²¹:

Դրասխանակերտցու մատնացուց արած ծովակը, որը գտնվում է Մեծամորի ախուներին հյուսիսային կողմում, համապատասխանում է Այլըր լճին, որտեղից իրոք սկիզբ է առնում Մեծամոր գետը: Վերջինիս ընթացքի ուղղութիւնը ճշտելու նպատակով մեր կողմից կատարված մի շարք հետազոտութիւնները հաստատում են, որ Մեծամորը սկիզբ առնելով Այլըր լճից ու նրա կողքերին դասավորված բլուրների ստորոտներից բխող աղբյուրներից, նախ ընթանում է դեպի հարավ, ապա քիչ հետո շրջանցելով «Ղարա-Քափա» (Սև բլուր) հնագիտական կարևոր բարձունքը արևմուտքից, անմիջապես թեքվում է դեպի արևելք և այդ նույն ուղղութիւնով շարունակելով իր ընթացքը, Արտաշատ քաղաքի արևելյան կողմում միանում է Արաքսին՝ ճանապարհին իր մեջ ընդունելով Քասաղ, Հրազդան (Զանգու) և Աղատ (Գառնի) գետերը:

Սակայն Մեծամորն այդպես է ընթացել հնում: Ներկայումս, ինչպես հայտնի է, Վերին հաթունարի գյուղի մոտ նա թեքվում է դեպի հարավ, ապա դառնալով մի փոքր դեպի հարավ-արևելք, անցնում է երկաթուղային՝ Էջմիածին-կայարանից քիչ դեպի արևելք և Ռանջպար գյուղի մոտ միանում է Արաքսին:

Քասաղ գետը, որ միանում է Մեծամորին, նույնպես բազմիցս փոխել է իր հունը: Հնում նա հոսել է Վաղարշապատ քաղաքի արևմտյան կողքով, ուր մինչև այժմ էլ գետի ցամաքած հունի վրա պահպանվել են քառաթուղք մեծ կամուրջի քարաշար սյուների մնացորդները: Շարունակելով իր ընթացքը ուղիղ դեպի հարավ Վերին հաթունարի գյուղի հարավային կողմում, Էջմիածնից Իգդիր տանող խճուղով՝ Մեծամորի կամուրջից մի քանի մետր ներքև միացել է Մեծամորին: Ներկայումս նա Մեծամորին է միանում ներքին Զեյվա գյուղից քիչ դեպի հարավ՝ ավելի քան յոթ կիլոմետր դեպի արևմուտք:

Մեծամորը, Քասաղ գետին միանալուց հետո, շարունակելով իր ընթացքը արևելյան ուղղութիւնով անցել է Նոր Ղամարլու (այժմ Մեծամոր) գյուղի հյուսիսային և Ղարղա-բաղար գյուղի հարավային կողմով, ապա

երկաթուղուն զուգահեռ մի քանի կիլոմետր ընթանալուց հետո անցել է երկաթուղին դեպի հարավ: Շարունակելով իր ընթացքը կրկին արևելյան ուղղութիւնով, երկաթուղու Մասիս (Ուլուխանլու) կայարանից քիչ արևմուտք իր մեջ է ընդունում Հրազդան (Զանգու) գետը: Բնորոշ է այն, որ Հրազդան գետը, ինչպես այդ ցույց են տալիս տեղագրական հետազոտութիւնները, մինչև Մեծամորին միանալը բոլորովին չի փոխել իր ընթացքը:

Որ Հրազդան գետը միացել է Մեծամորին, այդ մասին հիշատակում են նաև պատմական աղբյուրները: Մովսես Խորենացին շարունակելով հայոց Վաղարշակ թագավորի՝ երկրի սահմաններն ապահովելու նպատակով ձեռնարկած արշավանքների նկարագրութիւնը, գրում է.

«Իսկ երբ հյուսիսում ցրտեր և սառնամանիքներն սկսեցին փչել, նա այնտեղից շարժվեց, եկավ իջավ մեծ դաշտը, բանակ դրեց Մեծամորի ափերին, այն տեղում, որտեղից մեծ գետը հյուսիսային ծովակից սկիզբ առնելով, իջնում խառնվում է Մեծամորի հետ»²²:

Խորենացու «հյուսիսային ծովակից» դարձվածքը անշուշտ վերաբերում է Սևանա լճին, իսկ «մեծ գետը»՝ Հրազդանին, որն իրոք սկիզբ է առնում Սևանա լճից: Հրազդանը ներկայումս անմիջապես միանում է Արաքսին՝ հնում Մեծամորին միանալու վայրից դեպի հարավ՝ Սալաշալար գյուղի արևելյան կողմում:

Այնուհետև, Մեծամորը Հրազդանին միանալուց հետո շարունակելով իր ընթացքը հարավ-արևելյան ուղղութիւնով հոսել է Արաքսին զուգահեռ և Մուղամ ու Ռեհանլու գյուղերի մոտով անցնելով, Յուվա գյուղի հարավային կողմում իր մեջ է ընդունել Աղատ (Գառնի) գետը: Շարունակելով իր ընթացքը նույն ուղղութիւնով տեղ-տեղ Արաքսին է մոտեցել կես կիլոմետրաչափ հեռավորության վրա և շրջանցելով Արտաշատ քաղաքի բլուրները հյուսիսից՝ Արաքսին է միացել նրա արևելյան կողմում:

Մեծամորի հին հունը ափնառու կերպով նկատվում է՝ հնում Քասաղ գետին միանալու վայրից մինչև Աղատ գետին միանալու վայրը՝ նրանից քիչ դեպի արևելք և Արտաշատ քաղաքատեղի հյուսիսային կողմում՝ մինչև նրա Արաքսին միանալը: Դրանց միջև ընկած տարածությունը 5—6 կիլոմետր ամ-

21. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 113:

22. Մովսես Խորենացի, «Հայոց պատմութիւն», էջ 70:

բողջապես պատած լինելով ճահճներով ու եղեղնուաներով՝ անհետացել է գետի հունը։ Ինչպես հայտնի է, զարնանը, գետի հորդանալու հետևանքով Արաքսի և Աղատի ջրերը դուրս ելնելով իրենց ափերից երկար ժամանակով լինում են այդ համեմատաբար ցածրագիր մասերում և առաջացնում ճահճուտներ։ Այդ ճահճուտներում դարերի ընթացքում փոխվել բուսած խոտերը, ստեղծել են նոր հողաշերտ՝ ծածկելով ու հարթելով Մեծամորի հին հունը։

Աշխարհացույցում հաղորդված տեղեկությունները արժեքավոր ու հետաքրքրական են նրանով, որ աշխույժ մատնացույց է արվում Արաաշատ քաղաքի կառուցման տեղը՝ Աղատ-Մեծամոր և Արաքս գետերի միացման վայրում, որ հնում Աղատ գետը խառնվել է Մեծամորին և, որ դիտվորն է, առաջնորդում Աղատ գետը հոսել է Գլին քաղաքի կողքով՝ հետագայում փոխելով իր ընթացքը գետի արևմուտք։

Հնագիտական-տեղագրական հետազոտու-



ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆԷՐ

Որ Աղատ (Գառնի) գետը հնում միացել է Մեծամորին, այդ մասին որոշակի տեղեկություններ կան նաև մատենագրական աղբյուրներում։ Մովսես Խորենացուն վերագրվող աշխարհացույցի մեջ այդ մասին գրված է.

«Եւ ապա ելից նորա (Հրադդան գետից— Հ. Ե.) գետն Աղատ, և արդարն ազատ, որոյ ափունքն բղխեն ի Գեօղ լեռնէ, ի Սախուրակ տեղոյ, որ իջնելով ընդ Դովին, արբուցանէ զամենայն Ոստանն Հայոց, և անցնալ ընդ հարաւ անկանի յերասխ, յորոց ի մէջ շիննալ է Արաաշատ քաղաք, ուր յառաջին ժամանակն խառնուրդք Մեծամորի. իսկ այժմ փոխալ զգնացսն Մեծամորայ՝ խառնի ի մոտից կուսէ»²³։

Թյունները նույնպես հաստատում են, որ Աղատ գետը դուրս գալով լեռնային նեղ կիրճից չի շարունակել իր ընթացքը ուղիղ գետի Արաքս, ինչպես այժմ, այլ անմիջապես թերվելով գետի ձախ անցել է Գետաղատ և Վարդաշեն (Մեհրարլու) գյուղերի սահմաններով, Գլինի մոտով և Յուվա գյուղի հարավային կողմում միացել է Մեծամոր գետին։ Գլինի սահմաններում Աղատը բաժանվել է մի քանի ճյուղավորումների, որոնք հավանաբար փորվել են արհեստական կերպով՝ քաղաքը ջրային արգելանքներով պաշտպանելու նպատակով։ Աղատ գետից հանված այդ ճյուղավորումներն իրար են միացել մինչև Մեծամորին խառնվելը՝ երկաթուղուց վերը, Յուվա գյուղի արևմտյան կողմում։

Արաաշատի այժմյան շրջանի սահմաններում, շնորհիվ այն բանի, որ այստեղ հողը

23. «Աշխարհացույց Մովսէսի Խորենացու յաւերսածովը նախնեաց», Վենետիկ, 1881 թ., էջ 34։

շատ արգամանդ է ու բերրի, Ազատ գետի հին հունը մեծ մասամբ փորվել, հավասարվել է ու վեր ածվել մշակովի դաշտերի կամ այգիների: Գետի հին հունի մնացորդների հետքերը ակնառու կերպով նկատվում են Դվին քաղաքատեղի, Վարդաշեն (Մեհարբուն), Բզովան (Ախունդ Բզովան) և Ոստան (Բեջաղլու) գյուղերի սահմաններում:



Արտաշատ քաղաքի տեղադրության վերաբերյալ մեծ կարևորություն են ներկայացնում հոր Վիրապի մասին մատենագրական տեղեկությունները: Ազաթանգեղոսը պատմելով Գրիգոր Լուսավորչին մահվան դատապարտելու և հոր Վիրապի վիհը ձգելու հանգամանքները, ավելացնում է.

«... Արդ՝ իբրև այն ևս հասանէր թագաւորին ի վերայ իրացն, եթէ արգարև որդի Անակայ Պարթևի է, որ սպան ղեռնարով հայր նորա՝ հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնայ Այրարատ գաւառ և տալ զնա ի ղղեակ բերդին Արտաշատ քաղաքի, և իջուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի»²⁴:

Ինչպես տեսնում ենք, Ազաթանգեղոսը հոր Վիրապը որոշակի կերպով դնում է Արտաշատ քաղաքի միջնաբերդում: Սերեոսը նույնպես հոր Վիրապը դնում է Արտաշատ քաղաքում. նա գրում է.

«Եւ գկնի Նգրի յաջորդէ ղաթոս Ներսէս՝ եպիսկոպոս Տայոց: Սա շինեաց զվկայարան սրբոյն Գրիգորի ի վերայ վիրապին յԱրտաշատ»²⁵:

Հետագա հայ մատենագիրներից ոմանք դարձյալ հիշատակում են հոր Վիրապ վիհի

և վանքի մասին, դնելով այն Արտաշատ քաղաքում՝ հավանաբար օգտվելով նախորդ պատմիչներից: Բացի այդ, Արտաշատ քաղաքատեղի սահմաններում եղած բլրախմբի շարքի կենտրոնական մասի գագաթը շրջափակված է ամրոցապատերով, որոնց ներսում էլ գտնվում է հոր Վիրապը՝ նշված խորը փոսը, որի վրա էլ կառուցված է հոր Վիրապի վանքը: Հենց դա էլ Արտաշատի միջնաբերդն է, Ազաթանգեղոսի հիշատակած «ղղեակ բերդին»-ը: Պետք է նկատի ունենալ նաև, որ հայ պատմական աղբյուրները, բացի հիշյալ հոր Վիրապից ուրիշ հոր Վիրապ չեն հիշատակում Արարատյան դաշտավայրում. ուստի այդ փաստը մի ավելորդ անգամ հաստատում է, որ Արտաշատ քաղաքի իրոք գտնվում է այժմյան հոր Վիրապ վանքի սահմաններում՝ վերը նկարագրած հին բնակավայրի տեղում:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հին Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը, որը հիմնեց հայոց Արտաշես Ա քաղափոր 189—160 թվականներին մեր թվարկությունից առաջ, գտնվում է Արարատյան դաշտավայրում, Արաքս գետի ձախ ափին՝ գետի առաջացրած մեծ քնի և Մեծամորի հետ միանալու վայրում, բլուրների վրա, հոր Վիրապ վանքի շրջակայքում, ներկայիս Վեդուշյանի Շխար գյուղի արևմտյան կողմում:

Մեծամորը այժմյան Սև-ջուր գետն է, որը սկիզբ առնելով Այգր լճից և երա երկու կողմերում եղած բլուրների ստորոտներից բխող աղբյուրներից, ընդհանուր առմամբ հոսում է դեպի արևելք և հեռում Արաքսին է միացել Արտաշատ քաղաքի արևելյան կողմում, հանապարհին իր մեջ ընդունելով Քասաղ, Հրազդան (Ջանգու) և Ագատ (Դառնի) գետերը:

Այժմ միայն Քասաղ գետն է միանում Մեծամորին, ապա քափվում Արաքս, իսկ մյուս գետերը Արաքսին են միանում առանձին-առանձին, քստ որի Քասաղ և Ագատ գետերը մեծ չափով փոխել են իրենց ընթացքը դեպի արևմուտք:

24. Աթանգեղոս, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914 թ., էջ 70—71:

25. «Պատմութիւն Սերեոսի եպիսկոպոսի ի Հերակն», Թիֆլիս, 1913 թ., էջ 274:

